ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

9 հուլիսի 2026 թվականի N 992 - Ա

ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 57.1-ին կետը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Թույլատրել Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամին՝ Հայաստանի Հանրապետության տարբեր մարզերում մի շարք դպրոցների նորոգման համար անհրաժեշտ տեխնիկական վիճակի զննության, չափագրության և նախահաշվային փաստաթղթերի մշակման նպատակով կատարել ձեռք բերվող ծառայության ծավալների ավելացում՝ փոփոխություններ կատարելով 2024 թվականի մայիսի 31-ին «Գոլդ Ներս» ՍՊԸ և «Հազարաշեն» ՍՊԸ ՀԳ-ի (կոնսորցիում) հետ կնքված պետության կարիքների համար ծառայության մատուցման պետական գնման N ՀՏՋՀ-ՎՉԱՓ-ԽԲՄ-ԾՁԲ-2024/1 պայմանագրում՝ պայմանագրի ընդհանուր գնի 26.0 տոկոսի չափով՝ չկիրառելով Հայաստանի Հանրապե-

տության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 56-րդ կետի 2-րդ ենթակետի 1-ին նախադասության պահանջները:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

09.07.2026
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ